«Թուականութեանս Հայոց ՋԻԸ.»

‹Գրեցաւ տառս . . . (եղծուած) Աստուածայ ին և տիրաքարոզ ձեռամբ՝ անիմաստ և անարհեստ գրչի Գրիգոր սուտ անուն աբեղի ի խնդրոյ հեզահոգի և գեռարոյս Առաքել քահանայի՝ որ ստացաւ զսա ի արդար վաստակոց իւրոց և յիշատակ ծնողաց իւրոց»։

«. . . (եղծուած) ույց գրեցաւ սա ի գաւառս . . . (եղծուած) և յանապատս . . . (եղծուածը Աղթամար է)։»

«Ընդ հովանեաւ Ս . . . արդ. ես և Ս . . . վնաս վառեց և այլ բազմահաւաք սրբոցս յեպսոսթեան Տէր Ցուսկանս վերադիտողի . . . և . . . և . . . աւ առին յիշեսցէք և զԿիրակոս աբեղայ՝ որ բազում աշխատեց առ ի թղթիս կոկելն»։ . . . և զիս անարժանս զԳրիգոր աբեղաս և զհոգևոր մայրն իմ զՀանիշ որ տնտեսն յիշեցէք ի Քս. և ձեզ յիշողացդ և յիշեցելոցս ողորմեսցի Քս. . . . . . . ։ . . . Գամ գալստեան իւրոյ որում փառք յաւիտեանս ամէն»։

«Խոշորութեան սխալանաց անմեղադիր լերուք՝ զի կար մեր այսչափ . . . » (մի և կէս դժուարա ընթեռնելի)։

«Վսմ. սմտ. բ. շտլ. Ա. գրեցաւ յիշատակէ աւետարանս տր. Վարդան և որդուն տր. Սարգիս և միւս որդին սարկաւագ Աւետիս»։

«Վերջին ստացողի թուին ՌՂԲ ին ԻԱ աւգաւստոս ամսոյ Ը. ին աւրն Ե շբթի. և Քրիստոսի փառք յաւիտեանս ամէն»։

Բուլիկ գիւղացի Մկրտիչ քահանան 1864-ին գրաբառ լաւ յառաջաբան մի գրած է աւետարանիս և պատկերներ նկարած է, պատկերներն շատ անշնորք են։

Ներկայ երկու տարուան միջոցին Ալի-քօսէ գիւղէն երկու մեծ տապանաքարեր բերուած են Կուլաբ և զետեղուած են Մելիք Մնացականեաններու նոր մեռած երկու ննջեցելոց վրան [1]։

1. Այս տեսակ մի սովորութիւն է, որպէս Բաղրեւանդայ՝ նոյնպէս գիւղս կայ, շատ քչեր կան որ յատուկ տապանաքար չինեն իւրեանց